ԱՌԱՋԱՐԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Կ-1307-06.04.2026-ՖՎ-011/1), «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Կ-1307[1]-06.04.2026-ՖՎ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ԿՈԴ՝ Կ-1307[2]-06.04.2026-ՖՎ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Առաջին ընթերցմամբ ընդունված նշյալ օրենքների նախագծերի փաթեթի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2027 թվականի հունվարի 1-ը:

Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետադարձ հիփոթեքի համակարգը նոր է ներդրվելու և, որը վերաբերելու է հասարակության ֆինանսական գրագիտության առումով առավել խոցելի անձանց՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքի քաղաքացիներին: Ուստի օրենքների նախագծերի փաթեթում առաջարկվող կարգավորումները պետք է միատեսակ ընկալելի լինեն թե՛ շահառուների, և թե՛ ֆինանսական կազմակերպությունների համար: Գտնում եմ, որ բանկերին և վարկային կազմակերպություններին անհրաժեշտ է հավելյալ ժամանակ՝ ֆինանսական համակարգում նոր ծառայության տեսակն առավել հստակ ձևավորելու համար: